ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«19» օգոստոսի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ԳԲԽ-82/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002 թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի 05.08.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 05.08.2016թ. ներկայացրած բողոքով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ՀՀ ՊԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-16/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն 13.07.2016թ. paara-bugalteria@rambler.ru էլեկտրոնային հասցեից ստացել է «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված «ՀՀ ՊԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-16/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավեր, որի միակ չափաբաժնով նախատեսվում էր պատվիրատուի կարիքների համար ձեռք բերել ինտերակտիվ պրոյեկտոր:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ս.թ. հուլիսի 21-ին «ՀՀ ՊԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-16/16» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովին է ներկայացրել համապատասխան հայտը:

Ս.թ. հուլիսի 22-ին ժամը 10:00-ին կայացել է հայտերի բացման նիստը, որի ժամանակ պարզվել է, որ 1-ին չափաբաժնով հայտեր էին ներկայացրել «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ն և «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն, սակայն երկու մասնակիցների ներկայացրած գնային առաջարկներն էլ գերազանցում էին գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները և, քանի որ հայտերի բացման նիստում բացակայել է «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ ներկայացուցիչը, հանձնաժողովի նիստը կասեցվել է և առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով որոշում է կայացվել մասնակիցների հետ անցկացնել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ, որն էլ կայացել է ս.թ. հուլիսի 26-ին ժամը 16:00-ին:

Բանակցությունների արդյունքում առաջին տեղը զբաղեցրել է «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ն (ընդամենը՝ 815,000.00 ՀՀ դրամ ներառյալ 20% ԱԱՀ), իսկ հաջորդ տեղը՝ համապատասխանաբար, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն (ընդամենը՝ 820,000.00 ՀՀ դրամ ներառյալ 20% ԱԱՀ):

Ս.թ. հուլիսի 27-ին Ընկերությունը էլեկտրոնային եղանակով ստացել է paara-bugalteria@rambler.ru էլեկտրոնային հասցեից ուղարկված բանակցությունների արդյունքների վերաբերյալ 27.07.2016թ.-ի N 2 արձանագրության պատճենը:

Նույն օրը՝ հուլիսի 27-ին Ընկերությունը դիմել է «ՀՀ ՊԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-16/16» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովին, խնդրելով համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն և 30.01.2015թ. N 105-Ն որոշումներով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի VII մասի, 35 կետի, 4 ենթակետի, ինչպես նաև է «ՀՀ ՊԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-16/16» ծածկագրով ընթացակարգի Հրավերի I մասի 7.2.7 կետի՝ հասանելի լինելուն պես, էլեկտրոնային եղանակով տրամադրել իրեն ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղը

զբաղեցրած մասնակից «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ կողմից՝ համաձայն ընթացակարգի Հրավերի 7.5 կետի, 2-րդ ենթակետի՝ ըստ հրավերի II մասի 3-րդ բաժնի, պահանջների ներկայացման ենթակա բոլոր փաստաթղթերի պատճենները:

Ի պատասխան վեր նշված պահանջի՝ Ընկերությունը ս.թ. հուլիսի 29-ին էլեկտրոնային եղանակով ստացել է paara-bugalteria@rambler.ru էլեկտրոնային հասցեից ուղարկված «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ կողմից ներկայացված որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի պատճենները՝ 1) Հրավերի Հավելված N 5-ը, 2) «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ կողմից առաջարկվող ապրանքի անվանումն և տեխնիկական բնութագիրն և 3) «ACC Distribution» ընկերության ձևաթղթի վրա, բայց «Մաքստրոնիկ» ընկերության կողմից (վերջինիս կնիքով) «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ին տրված լիազորությունների մասին գրություն DAF (Դիստրիբյուտորական իրավազորման ձև-Distributor's Authorization Form) հավաստագիրը:

Ընկերությունը նշել է, որ ուսումնասիրելով հանձնաժողովից ստացված փաստաթղթերը, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ս.թ. օգոստոսի 01-ին առավոտյան ժամը 10:17-ին paara-bugalteria@rambler.ru էլեկտրոնային հասցեին ուղարկված նամակով պաշտոնապես տեղեկացրել է ընթացակարգի հանձնաժողովին, որ՝

1) Համաձայն ներկայացված փաստաթղթերի՝ «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ն առաջարկում է ՀՀ պետական կառավարման ակադեմիային մատակարարել Hitachi CP-TW3003 թվային պրոյեկտոր, որը՝ դեռևս անցած 2015 թվականից, հանված է արտադրությունից:

Տվյալ հանգամանքը հանգեցնում է նրան, որ սովորաբար բոլոր պետական հաստատությունների կողմից անցկացվող գնումներում նշվող դրույթն այն մասին, որ մատակարարվող ապրանքները «պետք է լինեն նոր, չօգտագործված և արտադրողի փաթեթավորմամբ» հնարավոր չի լինի իրագործել՝ առնվազն, «նոր» հասկացության մասով: Վերը նշվող համապատասխան տեղեկությունը հասանելի է արտադրողի պաշտոնական WEB կայքերում:

Ընկերությունը գտնում է, որ անհասկանալի է, թե ինչպե՞ս պետական հաստատությունը կարող է իրեն թույլ տալ գնել դեռևս անցած տարի արտադրությունից հանված և բարոյապես բոլորովին հնացած ապրանք (սարքավորում):

2) «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած DAF (Դիստրիբյուտորական իրավազորման ձև-Distributor's Authorization Form) փաստաթուղթը բացարձակապես չի

համապատասխանում իրականությանը և Ընկերության պնդմամբ որևիցե իրավական հիմք, և, առավել ևս, իրավական ուժ չունի, քանզի՝

ա) Ըստ «Hitachi Europe LTD» ընկերության՝ («Hitachi Digital Media Group» ընկերության եվրոպական մասնաճյուղ) Լեհաստանի, Ռուսաստանի Դաշնության և ԱՊՀ տարածաշրջանային մենեջեր Մաչեյ Զակրոցկու 29.07.2016թ.-ի պաշտոնական էլեկտրոնային նամակի, «Մաքստրոնիկ» ընկերությունն, ընդհանրապես, որևիցե պաշտոնական առնչություն չունի տվյալ արտադրողի հետ:

բ) «ACC Distribution» ընկերությունն, որի մի մասն էլ, ըստ ներկայացրած DAF-ի, հանդիսանում է «Մաքստրոնիկ» ընկերությունը, հանդիսանում է «Hitachi Digital Media Group» ընկերության գործընկեր (իրավազորված դիստրիբյուտոր) միայն Լիտվայի տարածքում և նույնպես որևէ առնչություն չունի արտադրողի գործունեությանը Հայաստանի տարածքում:

Ավելին, արտադրողի վերը նշված կայքում առկա է այն երկրների ցանկը, որտեղ պաշտոնապես ներկայացված է «Hitachi Digital Media Group» ընկերությունը, սակայն Հայաստանն այդ ցանկում պարզապես բացակայում է:

գ) Համապատասխանաբար, ըստ վերոհիշյալ ապացույցների, թե «ACC Distribution» ընկերությունը, թե «Մաքստրոնիկ» ընկերությունն ընդհանրապես որևէ իրավական հիմք չեն ունեցել վերագրելու իրենց «Hitachi Digital Media Group» ընկերության որակավորված և արտոնագրված գործընկերոջ իրավունքները Հայաստանի Հանրապետության տարածքում և առավել ևս, «Մաքստրոնիկ» ընկերությունն, իր հերթին, բացարձակապես ոչ մի իրավունք չուներ որևէ կերպ լիազորելու «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ին մասնակցելու «ՀՀ ՊԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-16/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին:

Ընկերությունը համոզմունք է հայտնել, որ ACC Distribution» ընկերությունը, հանդիսանալով վերը նշված արտադրողի գործընկեր (դիստրիբյուտոր) Լիտվայի տարածքում, պետք է տեղյակ լինի, որ միայն արտադրողն իրավունք ունի նշանակել լիազորված դիստրիբյուտոր այս կամ այն տարածքում:

Նույն օրը, ս.թ. օգոստոսի 01-ին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ժամը 16:03-ին paara-bugalteria@rambler.ru էլեկտրոնային հասցեով ուղարկված ևս մեկ նամակով գնահատող հանձնաժողովին է ներկայացրել «Hitachi Europe LTD» ընկերության պաշտոնական

հայտարարություն 01.08.2016թ. Հայաստանում իր լիազորված ներկայացուցիչների առկայության մասին, որտեղ «Մաքստրոնիկ» ընկերության անունն, ի սպառ բացակայում է:

Ընկերությունը՝ ոչ մի արձագանք չստանալով գնահատող հանձնաժողովին ուղարկված երկու վերը նշված էլեկտրոնային նամակների վերաբերյալ, հաջորդ օրը՝ ս.թ. օգոստոսի 02-ին, ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարի հետ կայացած հեռախոսազրույցի ընթացքում, տեղեկացվել է, որ հանձնաժողովի ուշադրությանը ներկայացված վերոհիշյալ փաստերը պարզապես հաշվի չեն առնվել գնահատող հանձնաժողովի կողմից:

Ավելին, գնահատող հանձնաժողովը չի ուղարկել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին հանձնաժողովի 01.08.2016թ. N 3 արձանագրությունն՝ «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ին ընթացակարգի N 1 չափաբաժնով ընտրված (հաղթող) մասնակից ճանաչելու մասին:

Ելնելով վերը շարադրվածից, Ընկերությունը գտնում է, որ առաջին տեղը զբաղեցրած «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ն կամա, թե ակամա խախտել է ՀՀ գնումների մասին օրենսդրությունը՝ մասնավորապես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ կետի 1-ին ենթակետը և 25-րդ հոդվածի 2-րդ կետը, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն և 30.01.2015թ. N 105-Ն որոշումներով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի VII-րդ մասի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ և «ՀՀ ՊԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-16/16» ծածկագրով ընթացակարգի Հրավերի I մասի 4.3 կետի «բ» ենթակետով ներկայացվող պահանջը և ներկայացրել է իրականությանը չհամապատասխանող և համաձայն՝ ներկայումս փաստացի ձեռք բերված ապացույցների, կեղծ տվյալներ, մասնավորապես, Հրավերի Հավելված N 1՝ «Տեխնիկական բնութագրով» պահանջվող DAF փաստաթուղթը:

Ելնելով վերը նշված բոլոր փաստերից՝ Ընկերությունը գտնում է նաև, որ պատվիրատուն ուղղակիորեն խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրությունն և ներկայացրել է պահանջ դադարեցնել «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի «ՀՀ ՊԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-16/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձաժողովի 01.08.2016թ. N 3 արձանագրության՝ «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ին ընթացակարգի N 1 չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչելու որոշումը:

Ի լրումն ներկայացված բողոքի՝ Ընկերությունը 17.08.2016թ. թիվ 1/10-08/17 գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին հայտնել է, որ «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ի

կողմից ս.թ. օգոստոսի 11-ին ժամը 16:00-ին կայացած բողոքը քննող հանձնաժողովի նիստի ժամանակ ներկայացված «Մաքստրոնիկ» ՓԲԸ-ի՝ որպես «Hitachi Europe LTD» ընկերության դիստրիբյուտոր հանդիսանալու վերաբերյալ գրությունը (որով «Մաքստրոնիկ» ընկերությունը լիազորվում էր հանդես գալ որպես դիստրիբյուտոր և տրամադրել DAF-եր միայն որոշակի համաձայնեցված դեպքերում) տրվել է «Hitachi Europe LTD» ընկերության Հյուսիսային (Nordic) տարածաշրջանային մենեջեր Անդերս Մագնուսսոնի կողմից, ով, համաձայն նույն ընկերության Լեհաստանի, Ռուսաստանի Դաշնության և ԱՊՀ տարածաշրջանային մենեջեր Մաչեյ Զակրոցկու առ 29.07.2016թ. պաշտոնական էլեկտրոնային նամակի՝ որևիցե առնչություն չունի «Hitachi Europe LTD» ընկերության կողմից Հայաստանում իրականացվող գործունեության հետ:

Բացի դրանից, տվյալ գրությունը ստորագրվել է ընդամենը 08.08.2016թ., մինչդեռ այդ փաստաթուղթը պարտադիր պետք է ներկայացվեր «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից առնվազն, ս.թ. հուլիսի 29-ին «ՀՀ ՊԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-16/16» ծածկագրով ընթացակարգի հրավերի Հավելված N 5-ով նախատեսված փաստաթղթերի հետ՝ որպես DAF-ը ուղեկցող վկայություն, որն հաստատում է փաստաթուղթն (DAF-ը) արձակող կազմակերպության լիազորությունները: Ընկերության կարծիքով, հակառակ դեպքում, ստեղծվում է մի իրավիճակ, երբ ցանկացած տեղական ընկերություն կարող է իրեն վերագրել այս կամ այն արտադրողի պաշտոնական գործընկերոջ իրավունքները: Բացի այդ, ս.թ. հուլիսի 29-ին «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված DAF փաստաթղթի ամսաթիվն ընդհանրապես բացակայում է:

Ընկերությունը հայտնել է, որ «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել «Hitachi Europe LTD» ընկերության և «Մաքստրոնիկ» ՓԲԸ-ի միջև դիստրիբուցիայի վերաբերյալ պայմանագիրը և համապատասխան հավաստագիրը (սերտիֆիկատը): Ընդ որում, համաձայն ընդունված անառարկելի միջազգային բիզնես սովորույթների, այդ փաստաթղթերը պարտադիր և անբաժան մասն են կազմում ցանկացած արտադրողի ապրանքի պաշտոնական դիստրիբուցիան իրականացնելու համար:

Ի ապացույց վերջին դրվագի՝ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացուցիչները վերոհիշյալ նիստի ժամանակ բողոքը քննող հանձնաժողովի ուշադրությանն են ներկայացրել համապատասխան նմանատիպ պայմանագրեր կնքված նույնպես ճապոնական ընկերությունների՝ Panasonic Corp. և NEC Display Solutions LTD հետ:

Ավելին, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի համար անհասկանալի է, թե ի՞նչ իրավական հիմքերով է ղեկավարվել «ՀՀ ՊԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-16/16» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, երբ ս.թ. օգոստոսի 01-ին ճանաչել է «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ն ընտրված մասնակից՝ անտեսելով նույն օրը մինչև որոշումը ընդունելը Ընկերության կողմից հանձնաժողովին տրամադրված «Hitachi Europe LTD» ընկերության Լեհաստանի, Ռուսաստանի Դաշնության և ԱՊՀ տարածաշրջանային մենեջեր Մաչեյ Զակրոցկու 29.07.2016թ. պաշտոնական նամակը և 01.08.2016թ. պաշտոնական հայտարարությունն այն մասին, որ «Մաքստրոնիկ» ՓԲԸ-ն ընդհանրապես որևէ առնչություն չունի տվյալ արտադրողի հետ և բացակայում է «Hitachi Europe LTD» ընկերության դիստրիբյուտորների ցանկում: Ինչպես նաև, անհասկանալի է այս դեպքում նաև այն, թե ինչու՞ մինչև որոշում ընդունելը «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ից չի պահանջվել ներկայացնել «Մաքստրոնիկ» ընկերության՝ «Hitachi Europe LTD» ընկերության պաշտոնական դիստրիբյուտոր հանդիսանալու իրավական ապացույցները:

«Ֆիլմա Ալֆա» ՍՊԸ-ն պնդում է, որ բացի ս.թ. օգոստոսի 11-ին «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից «ԳԲԽ-82/16» բողոքը քննող հանձնաժողովին ներկայացված 08.08.2016թ. նամակի փաստի, «Մաքստրոնիկ» ընկերությունն, որպես հայտնի արտադրողի դիստրիբյուտոր հանդես գալու համար ոչ մի իրավական հիմք չի ունեցել:

Ընկերությունը ներկայացրել է «Hitachi Europe LTD» ընկերության Լեհաստանի, Ռուսաստանի Դաշնության և ԱՊՀ տարածաշրջանային մենեջեր Մաչեյ Զակրոցկու առ 12.08.2016թ. պաշտոնական էլեկտրոնային նամակի պատճենը, որով հայտնել է, որ իր գործընկերը սխալ է գործել և արդեն կապվել է այդ ընկերության հետ՝ խնդրելով դադարեցնել նախկինում տրամադրված հավաստագրի օգտագործումը: Նա այդ ընկերությանն է ուղարկել կից նամակը, որը անվավեր է դարձնում նախկինում տրված հավաստագիրը:

Ընկերությունը ներկայացրել է նաև 2016թ. օգոստոսի 15-ին էլեկտրոնային փոստով «Hitachi Europe LTD» ընկերության Հյուսիսային (Nordic) տարածաշրջանային մենեջեր Անդերս Մագնուսսոնի՝ ՀՀ կառավարության աշխատակազմի «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին և մյուս շահագրգիռ հասցեատերերին ուղարկած պաշտոնական նամակն, որով պրն. Մագնուսսոնը տեղեկացնում է, որ «Մաքստրոնիկ» ՓԲԸ-ին 08.08.2016թ. վերը նշված փաստաթուղթը տրվել է թյուրիմացաբար և այն ճանաչվել է

անվավեր: Բացի այդ, նույն նամակին կցված է հենց ինքը ջնջված փաստաթուղթն, որը հաստատված է կատարողի ստորագրությամբ և կնիքով:

2. «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 08.08.2016թ. թիվ 01/04.2/2994-16 գրությամբ դիմել է «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով եռօրյա ժամկետում ներկայացնել «ՀՀ ՊԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-16/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և տալ կարծիք, սակայն պատվիրատուի կողմից պատասխան չի ստացվել:

3. «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով «ՀՀ ՊԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-16/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. հուլիսի 27-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 7.1 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակից «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ն «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 11.08.2016թ. ժամը 16:00-ին ԳԲԽ-82/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ, ինչպես նաև 12.08.2016թ. թիվ 09/7480-16 գրությամբ բողոքը քննող հանձնաժողովին խնդրել է 05.08.2016թ.-ի «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացրած, «ՀՀ ՊԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-16/16» ծածկագրով մրցույթի շրջանակներում, հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով և 4.3 կետով նախատեսված փաստաթղթերը «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ոչ պատշաճ ներկայացնելու մասին բողոքը մերժել, քանի որ բողոքում նշված՝ DAF փաստաթուղթը չի պահանջվում «ՀՀ ՊԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-16/16» ծածկագրով մրցույթային հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով և մրցույթի 4.3 կետով:

«ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ն ներկայացրել է նաև «Մաքստրոնիկ» ընկերության լիազորությունները հավաստող փաստաթուղթը, համաձայն որի «Մաքստրոնիկ» ՓԲԸ-ն լիազորված է «Հիտաչի Եվրոպա» ՍՊԸ-ի կողմից գործելու որպես մատակարար՝ որոշակի համաձայնեցված դեպքերում, տրամադրելու DAF-եր (Մատակարարների իրավասության ձևաթղթեր) և Հիտաչի ապրանքների մատակարարման համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր՝ Հայաստանի Հանրապետության կառավարման ակադեմիայի կողմից կազմակերպված մրցույթների ժամանակ:

4. ԳԲԽ-82/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-82/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ՀՀ ՊԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-16/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

2. «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ը, Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով, սահմանել է Distributor's Authorization Form-ի (դիստրիբյուտորական իրավազորման ձև) առկայության պահանջ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. հուլիսի 27-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 7.1 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ն, որը ներկայացրել է Ընթացակարգին մասնակցելու հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը, համաձայն որի՝ ընկերությունը պարտավորվում է մակատարարել HITACHI-CP-TW3003 մոդելի ինտերակտիվ պրոեկտոր:

4. «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ն ապրանքի անվանման և տեխնիկական բնութագրին կից ներկայացրել է նաև «Մաքստրոնիկ» ՓԲԸ-ի կողմից տրված Distributor's Authorization

Form, համաձայն որի՝ «Մաքստրոնիկ» ՓԲԸ-ն հանդիսանում է «Hitachi Digital Media Group»-ի որակավորված և լիազորված մատակարար:

5. <u>ԳԲԽ-82/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի 05.08.2016թ. ներկայացրած բողոքը, ի լրումն բողոքի՝ 17.08.2016թ. թիվ 1/10-08/17 ներկայացված գրությունը և «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ի 12.08.2016թ. թիվ 09/7480-16 գրությունը, հայտնում է հետևյալը.

«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով «ՀՀ ՊԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-16/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) հրավերի ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կարիքների համար «Համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի» մատակարարման պայմանագրի նախագծի Հավելված N 1-ով, որպես տեխնիկական բնութագրի պահանջ նախատեսվել է Distributor's Authorization Form-ի (այսուհետ նաև՝ DAF սերտիֆիկատ) առկայությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. հուլիսի 27-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 7.1 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ն, որից գնահատող հանձնաժողովը պահանջել է ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

«ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ն ներկայացրել է ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը, համաձայն որի՝ ընկերությունը պարտավորվում է մատակարարել HITACHI CP-TW3003 մոդելի ինտերակտիվ պրոեկտոր: Ընկերությունը ներկայացրել է նաև «Մաքստրոնիկ» ՓԲԸ-ի կողմից տրված DAF սերտիֆիկատ, համաձայն որի՝ «Մաքստրոնիկ» ՓԲԸ-ն ՀՀ-ում հանդիսանում է «Hitachi Digital Media Group»-ի որակավորված և լիազորված մատակարար և լիազորում է «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ին ներկայացնել հայտ, բանակցել և կնքել «Մաքստրոնիկ» ՓԲԸ-ի կողմից արտադրված ցանկացած ապրանքի մատակարարման պայմանագիր:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չի ներկայացվել «Hitachi Digital Media Group»-ի և «Մաքստրոնիկ» ՓԲԸ-ի միջև դիստրիբուցիայի վերաբերյալ պայմանագիրը և համապատասխան սերտիֆիկատը:

Տվյալ պարագայում, Պատվիրատուն առանց ստուգելու, թե արդյո՞ք «Մաքստրոնիկ» ՓԲԸ-ն իրականում հանդիսանում է ՀՀ-ում «Hitachi Digital Media Group»-ի պաշտոնական ներկայացուցիչ և արդյո՞ք «Մաքստրոնիկ» ՓԲԸ-ն իրավունք ուներ «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ին իրավազորելու մատակարարել Hitachi պրոյեկտորներ, բավարար է գնահատել «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և 2016թ. օգոստոսի 01-ի թիվ 3 որոշմամբ «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ին ճանաչել է ընտրված մասնակից:

ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ)՝

- 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է, որ ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:
- 49-րդ կետի համաձայն՝ ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:
- 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած

մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

• 52-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով, Պատվիրատուն առաջին տեղը զբաղցրած մասնակցից պահանջելով տեխնիկական բնութագիր՝ ներառյալ DAF սերտիֆիկատ, առանց փաստաթղթի գնահատման և մասնակցին փաստաթղթում անհամապատասխանության շտկման հնարավորություն տալու՝ վերջինիս ճանաչել է ընտրված մասնակից, ինչի հետևանքով գտնում ենք, որ անհրաժեշտ է դադարեցնել գնահատող հանձաժողովի 01.08.2016թ. N 3 արձանագրության՝ «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ին ընթացակարգի N 1 չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչելու որոշումը և վերագնահատել «ԼանԱր սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի 05.08.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել՝ դադարեցնել գնահատող հանձաժողովի 01.08.2016թ. N 3 արձանագրության՝ «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ին ընթացակարգի N 1 չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչելու որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-82/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Կատվալյան